

նշանակութիւնը կը գտնէին մասնաւոր շինուած ցանկի մը մէջ :

՚ՈՒՍԽԱՅ կամ ՊԱՀՊԱՆԱԿ . Օ անազան տեսակ էր նուսխայից դորձածութիւնը : ՚Եկ քանի մետաղ՝ աստեղաց այլ և այլ զուգընթացութեժամանակ հալելով, և վրան նշանակիրեր գրելով կ'ըլլար : ՚Իմայ ալ Տաճկըները խիստ կը յարգեն վէկը սուած մատնին, որուն վրայ և մէջի կողմը պատշաճ ժամանակով (այսինքն էլք առաջանակ) գրեր և նշանագիծեր փորել կուտան : ՚Պղտի տղաք չար աչքէ պահելու համար՝ դիտոր, պաղեղ և օձի լեզու կարծուած քար մը կը կախեն : ՚Մանց նուսխայից կուտային զօրութիւն գալիքը իմանալու ումանց՝ հիւանդութենէ ըռընտցընելու, վնասակար կենդանիներէ և դիւթութենէ ազատ պահելու, կամ ցան կութիւն գրգռելու, կամ իշխանաւորի մը աչքը մտնելու :

՚Դոհարեղինաց ալ զանազան պահապան զօրութիւն կուտային : ՚Մանք ակռայի ցաւէ ազատելու համար՝ կուրծքերնուն վրայ ձիու կամ իշու ակռայ մը կը կախէին : ՚Մանք ալ բաղդատոր ըլլալու համար՝ օձի շապիկ վրանին կը կրէին : ՚Այսպիսի աւելորդապաշտութեանց վերջը չէր իգար, թէ որ ամէնն ալ ուզէինք հոս նշանակել :

՚Այս վերոյգրեալ հմայութեանց համառօտ ցանկին վրայ աչք մը դարձնելով՝ կարդացողը բացայացտ կը տեսնէ թէ որչափ ննջն բաներով մարդս խաթուերէ : ՚Լուսի, ինչպէս վերը ըսինք, այս՝ գիտութեամբ ծաղկեալ դարուս մէջ, և քրիստոնէական լուսով լուսաւորեալ ժամանակս, ամօթ և մեղք է հաւատք ընծայել այս պիսի բաներու, որոնց իրաւը միայն ՚Կամուած կրնայ ընել : ՚Վ կրնայ, բաց ՚ի նմանէ՝ և որուն որ ինքյայտնել կ'ուզէ, գալիքը իմանալ : ՚Նչ կարօղ է մարդս հմայեկ շինելով՝ մէկը մէկալը կապել . պառկի մը մէջ զանազան նիւթեր եփելով՝ հեռու

քաղքէ բռնութեամբ մարդը քովը բերել . մարդու աչքը կապելով՝ ուզածը ցուցընել, ուզածը աներեւյթընել . գլխանոց մը գլուխը անցընելով՝ ամէն տեղ պրտրտիլ, և մէկու մը չերենալ . և այն : ՚Կոնց սքանչելիք և հրաշք կ'ըսենք . և հրաշքը միայն ամենակարօղ զօրութեանը իշխանութեան տակն է . և մահկանացուի մը մեծ յիմարութիւն և անօրէնութիւն է : ՚Կամուծոյ զօրութեանը ինքը զինքը հաւասար կարծել : ՚Կ բաներուս հաւատալու համար՝ պէտք է կամ խենթ ըլլալ, կամ զԿամուած ուրանալ :

\* \*

### Ա Ռ Ա Կ

#### Ա Է Ւ Լ Մ Ա Հ :

“ ՚Վ զըրջնովկ սասան չար, Յերբ լըլիցես զեղիելիս ”  
Ասէր ալեւը վըշտահար  
Առ մազն ՚ի գառըն ըալիս :  
Եւ զայս ցալիւը մազն ասէր .  
“ Բայց լըլիովդ և մաքրիս ”  
Մէ դու զբըննիչդ անդոսներ  
Թէ լաւանալ կամիցիս :

#### Պ Ա Խ Ա Ն Ա Հ Ա Յ Ե Լ Ի :

Կռն պառաւ ձօն Ասարզիան ետ զհայելին .  
“ Ոչ ես, ասէ, պէտս ինչ ունիմես սըմին .  
Զինչ էին՝ գա ոչ կարէ ինձ ցուցանել,  
Եւ զոր ինչ եմ արդ ոչ կամիմ տեսանել ” :

—